ՍՏԻ ՈՒ ԿԵՂԾԻՔԻ ԱՍՈՒԼԻՍ

Մոսկուայում Ադրբեջանի մշտական ներկայացուցչութիւնում տեղի ունեցած ասուլիսն ընթացաւ բացայայտ ստի ու կեղծիքի մթնոլորտում։ Ինչպէս երեք տարի շարունակ, այնպէս էլ այս ասուլիսում կազմակերպիչները փորձում էին մեղքը բարդել հայերի վրայ։ Նրանք յայտարարեցին, թէ «Մարտունաշէնի եւ Գետաշէնի բնակիչներն իրենք են հրկիզել իրենց տները եւ սպանել իրենց հայրենակիցներին»...

Ստորութի՞ւն է։ Իհարկէ։ Բայց դա ի՞նչ նշանակութիւն ունի նրանց համար։ Կարեւորը նպատակն է։ Կարեւորը հասարակական կարծիք ստեղծելն է, որի համար միջոցների միջեւ խտրութիւն չեն դրել ու չեն դնում։

Թէեւ պէտք է ասել, որ այս անգամ կարծես թէ նրանք չափն անցան ու բացայայտ ստերով արջի ծառայութիւն մատուցեցին իրենց։ Լրագրողների մեծ մասը բացայայտ թերահաւատութեամբ ու հեգնանքով էին ընդունում ադրբեջանցիների յայտարարութիւնները, շատերը ասուլիսի կէսից հեռացան դահլիճից։ Ասուլիսը ձախողուեց։